ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.07.2015թ.
256-ի 6

ՀՀ ոստիկանության Ճանապարհային
ոստիկանության պետ
պարոն Արմեն Հակոբյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հակոբյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Քանի՞ դատական գործ է նախաձեռնվել (սկսվել) ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանություն ծառայության դեմ 01.01.2015թ.-01.07.2015թ.,
2. Քանի՞ դատական գործ է գտնվում ընթացքում (դեռ չի ավարտվել) ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանություն ծառայության դեմ 01.07.2015թ. դրությամբ,
3. Խնդրում ենք տրամադրել 01.01.2015թ.-01.07.2015թ. ավարտված դատական գործերով դատարանների վերջնական դատական ակտերի պատճենները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան